ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

№ 629 Ս. Էջմիածին 2 Նոյեմբեր 1992

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

Սիրեցեալ Ամենապատիւ Եղբայր,

Խորվայոյզ սրտով պարտք կը զգանք Ձեզ տեղեակ պահել, որ ուրբաթ օր Նոյեմբերի 30-ին երեկոյեան, Մեզի համար անակնկալ կերպով, Երևանի հեռուստացոյցէն ձայնասփռուեցաւ հաղորդագրութիւն մը, որով մանրամասնօրէն հաղորդուեցաւ թէ Երուսաղէմի և Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքութեանց ներկայացուցիչներ և Միացեալ Նահանգաց ու Գանատայի հայոց թեմական առաջնորդներ այցելած են Վատիկան և կարդինալներ Սիլվեստրինիին ու Գասիտիին ներկայացուցած են յուշագիր մը սիրոյ ողջոյններով, և տեսակցած են յիշեալ կարդինալներու հետ, որմէ յետոյ Սրբազան Պապը ընդունած է զանոնք և իր բարի մաղթանքներն ու ողջոյններն է յղած Հայ Եկեղեցիին ու ժողովուրդին:

Հաղորդագրութեան մէջ ոչ մէկ խօսք այն մասին, որ դուք ձեր յուշագրով և ձեր կենդանի խօսքով ուզած էք հերքել հայ կաթոլիկ պատրիարքի 7 Յունիս 1992 թուակիր՝ „Վերադարձ Հայաստան" կոնդակի անուղիղ և մեր Եկեղեցիի համար ծանրօրէն վիրաւորական պարբերութիւնները, ոչ մէկ խօսք այն մասին, որ դուք փորձած էք պաշտպանել այդ անուղիղ կոնդակի առթիւ, Մայր Աթոռիս և Ամենայն Հայոց Կաթողիկոսի որդեգրած կեցուածքը Ձեզի ծանօթ՝ Մեր 30 Օգոստոս 1992 թուակիր յայտարարութեամբ և Մեր 26 Սեպտեմբեր թուակիր հեռագրաւ ուղղեալ կարդինալ Սիլվեստրինիին:

Այս խորամանկ հաղորդումով Վատիկան Ձեր այցելութիւնը օգտագործած է՝ յաչս Հայաստանի ժողովուրդին ջրելու Մեր հրապարակած արդար դժգոհութիւնները, փորձելով ցոյց տալ որ ամէն ինչ կարգաւորուած է էկումենիկ ոգով և ամէն ինչ բնականոն է մեր երկու Եկեղեցիներու միջև:

digitised by A.R.A.R.@

Պարզ նկատելի է միտումը՝ հակադրելու Ձեր այցը Վատիկան, Մայր Աթոռիս պաշտօնական կեցուածքին:

Հաղորդումը կատարուած է Հռոմէն, Ռուսաստանի հեռագրային գործակալութեան միջոցաւ:

Որով նոր յուսախաբութեամբ լսեցինք այս նենգամիտ հաղորդումը:

Հայ կաթոլիկ պատրիարքի 7 Յունիսին հրապարակած կոնդակով Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցին պաշտօնապէս հռչակուած է անվաւեր ու հերետիկոս Եկեղեցի և իր տիտղոսի վրայ աւելցուած է „Կաթողիկոս Հայոց Ուղղափառաց" տիտղոսը, որդեգրելով նաև տիտղոսը „Սեբաստիոյ Աթոռի" գահակալի: Ահաւոր փորձ մըն է այս, արմատէն կացինահարելու մեր Մայր Եկեղեցին:

Մինչև որ Յովհաննէս-Պետրոս հայ կաթոլիկ պատրիարքը յետս չկոչէ այս երեք անուղիղ յայտարարութիւնները, Մենք բոլորս որևէ յարաբերութեան կամ գործակցութեան մէջ չենք կրնար գտնուիլ հայ կաթոլիկներու հետ:

Այս է Մեր վճռական արդար կեցուածքը, և վստահ ենք թէ լիովին կը բաժնէք Մեր լուրջ մտահոգութիւնները և վրդովումը:

Կրօնական կեանքի մակարդակի վրայ, Հայաստանի մէջ ստեղծուած շփոթ կացութեանց առջև կանգնած, անհրաժեշտ կը գտնենք, որ մեր Սուրբ Եկեղեցին, իր նուիրապետական բոլոր Աթոռներով և թեմական առաջնորդներով, միասնական ճակատ կազմէ, պաշտպանելու համար ազգային ուղղափառ մեր Եկեղեցին, անոր պատմական ժառանգութիւնը և անոր մեր օրերու առաքելութիւնը, որ գերագոյն գրաւականն է և ուժը համայն մեր ազգի՝ հոգևոր, մշակութային և ազգային միասնութեան, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

„Զի մի յայսմհետէ իցեմք տղայք խռովեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան: Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեցուսցուք ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս" (Եփես.Դ. 14-15). ամէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վազգէն Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@